Գիտություն

ՄԱՅԻՍ
№5
(398)
2025 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Ռադիկ Մարտիրոսի ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահությունը խոր վշտով հայտնում է, որ 89 տարեկան հասակում կյանքից հեռացել է ականավոր ռադիոֆիզիկոս, գիտության ու կրթության հմուտ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՌԴ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:

Ռադիկ Մարտիրոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: 1943-1953 թթ. սովորել է Մատաղիսի միջնակարգ դպրոցում: 1958 թ. Ռադիկ Մարտիրոսյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1958 թ.՝ որպես ՀԽՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանի կրտսեր գիտաշխատող: 1960 թ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: 1960-1964 թթ. Ռադիկ Մարտիրոսյանը սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի Պ. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում: Գիտության նկատմամբ նրա վերաբերմունքը ձևավորվել է այդ տարիներին՝ Նոբելյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ալեքսանդր Պրոխորովի ղեկավարությամբ: Նա կատարել է գիտական ուշագրավ մի շարք հետազոտություններ քվանտային ուժեղարարների ստեղծման համար և դարձել ռադիոաստղագիտության բնագավառում այդպիսի ուժեղարարների կիրառման առաջամարտիկներից մեկը: Նրա մշակած 21սմ ալիքի երկարության քվանտային ուժեղարարը Խորհրդային Միությունում առաջինն է կիրառվել ռադիոաստղագիտության մեջ: Հետագայում Ռադիկ Մարտիրոսյանի անմիջական ղեկավարությամբ ստեղծված գերբարձր հաճախություններով աշխատող բարձր զգայնությամբ ռադիոհամակարգերը լայնորեն կիրառվել են երկրի բնական պաշարների ուսումնասիրության «Интеркосмос»,«Природа», «Океан» տիեզերական ծրագրերում: Առանձնահատուկ է եղել նաև Ռադիկ Մարտիրոսյանի մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրության ծրագրին, մասնավորապես «Вега» ծրագրի իրականացմանը:

1968-1970 թթ. Ռադիկ Մարտիրոսյանը զբաղեցրել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի լաբորատորիայի բաժնի վարիչի պաշտոնը, 1970-1980 թթ.՝ գիտական աշխատանքների գծով փոխտնօրենի պաշտոնը: 1980-2006 թթ. նա եղել է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն, 1983-1993 թթ.՝ ԵՊՀ-ում իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված գերբարձր հաճախությունների ֆիզիկայի ամբիոնի վարիչ, 1993-2006 թթ.՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, 2006-2021 թթ.՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ: 2021 թ.-ից նա ՀՀ ԳԱԱ նախագահության գլխավոր խորհրդականն էր և «ՀՀ ԳԱԱ Զեկույցներ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրը:

Ռադիկ Մարտիրոսյանը երկարամյա բեղուն գործունեություն է ծավալել և անգնահատելի ներդրում ունեցել Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության և գիտության ոլորտների զարգացման գործում: Բոլոր պատասխանատու պաշտոններում պետական մտածողությամբ կառավարչի ունակությունների և հմտությունների շնորհիվ Ռադիկ Մարտիրոսյանը նշանակալից ձեռքբերումներ է գրանցել և զարգացման ավելի բարձր մակարդակի հասցրել իր ղեկավարած կազմակերպությունները:

Ռադիկ Մարտիրոսյանի ղեկավարման տարիներին ԵՊՀ-ում բացվել են հանրապետությանն անհրաժեշտ մասնագետների պատրաստման նոր ֆակուլտետներ, իսկ ուսանողության թիվն աճել է շուրջ երկու անգամ: Նրա կազմակերպչական հմտությունների շնորհիվ համալսարանն ընթացել է լավագույն ավանդույթների պահպանման ու շարունակական առաջընթացի ճանապարհով:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում Ռադիկ Մարտիրոսյանը նախաձեռնել և ստեղծել է գիտական կազմակերպությունների բովանդակային միավորումներ՝ գիտական կենտրոններ, իրականացրել է ԳԱԱ համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունն ապահովող բովանդակային ու կառուցվածքային բարեփոխումներ: Նրա անմիջական ղեկավարությամբ ընդլայնվել է ԳԱԱ միջազգային գիտական համագործակցությունը, իսկ 2011 թ. Ազգային ժողովը հաստատել է «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքն ու ԳԱԱ հատուկ կարգավիճակը:

Ռադիկ Մարտիրոսյանը մեծապես նպաստել է Արցախի գիտակրթական կյանքի զարգացմանը: ՀՀ ԳԱԱ-ի և Արցախի Հանրապետության կառավարության համատեղ քննարկումների արդյունքում 2007 թ. Արցախում ստեղծվել է գիտական կենտրոն:

Ռադիկ Մարտիրոսյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատանքների, որոնք վերաբերում են դեցիմետրական տիրույթի քվանտային ուժեղարարների ստեղծմանը և դրանց ռադիոաստղագիտական կիրառություններին, քվանտային էլեկտրոնիկայի համար արհեստական բյուրեղների ստեղծման տեխնոլոգիաների կատարելագործմանը, բարձր զգայնությամբ ընդունիչ համակարգերի մշակմանն ու ներդրմանը: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են 9 թեկնածուական, 2 դոկտորական ատենախոսություններ:

2016 թ. Ռադիկ Մարտիրոսյանն ընտրվել է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Իր հայրենանվեր գործունեության համար ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով (1981 թ.), Յուրի Գագարինի անվան ոսկե մեդալով (1984 թ., Տիեզերագնացության ֆեդերացիայի բյուրոյի նախագահություն), «Աշխատանքի վետերան» մեդալով (1985 թ.), «Հոկտեմբերյան հեղափոխության շքանշան»-ով (1986 թ.), «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (1999 թ.), «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանով (2007 թ.), «Վալերի Բրյուսով» մեդալով (2010 թ., Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ռուսաստանյան ընկերություն), «Գարեգին Նժդեհ» մեդալով (2011 թ., ՀՀ ՊՆ), «Հայաստան-Սփյուռք գործակցության» ոսկե մեդալով (2011 թ., ՀՀ Սփյուռքի նախարարություն), «Ֆրիտյոֆ Նանսեն» մեդալով (2012 թ.), «Անդրանիկ Օզանյան» մեդալով (2013 թ., ՀՀ ՊՆ), «Մարշալ Բաղրամյան» մեդալով (2016 թ., ՀՀ ՊՆ), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով (2012 և 2017 թթ.):

Ռադիկ Մարտիրոսյանն Ուկրաինական ՍՍՀ Պետական մրցանակի (1989 թ.) և Հայկական ՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր է:

Անվանի գիտնականի վաստակը բարձր է գնահատվել նաև արտերկրում: Նա արժանացել է «Palmes Academiques» (2005 թ., Ֆրանսիա) և Stella DellaSolidariteta (2004 թ., Իտալիա) պարգևների, 2024 թ. պարգևատրվել է «300 лет Российской академии наук» մեդալով:

ՀՀ ԳԱԱ նախագահությունն իր ցավակցությունն է հայտնում ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին, Հայաստանի Հանրապետության գիտական ու կրթական համայնքին:

Ռադիկ Մարտիրոսյանի գիտակրթական անուրանալի ժառանգությունն ընդմիշտ կմնա Հայաստանի գիտության և բարձրագույն կրթության պատմության մեջ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

«Կենսաբազմազանություն, պահպանություն և կլիմայի փոփոխություն» միջազգային գիտաժողովը

Ս/թ. մայիսի 5-7-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Կենսաբազմազանություն, պահպանություն և կլիմայի փոփոխություն» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը և Երևանի պետական համալսարանը:

Գիտաժողովը համախմբել էր 100-ից ավելի գիտնականների և մասնագետների շուրջ 20 երկրներից, ովքեր քննարկեցին կենսաբազմազանության պահպանության և կլիմայական փոփոխություններին առնչվող հիմնախնդիրներն ու գործնական լուծումները:

«Այս միջոցառումը նպատակ ունի զարգացնելու միջազգային և միջգիտակարգային համագործակցությունը: Այստեղ մենք կլսենք նոր հետազոտությունների մասին: Գիտաժողովն ունի ավելի քան 100 մասնակից, որոնց շուրջ 50 տոկոսը երիտասարդ գիտնականներ են»,- ասաց ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտա-

կան կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանն ասաց. «Հայաստանը կենսաբազմազանությունը տեսնելու լավագույն վայրերից մեկն է, նաև ցորենի և գարու 8 տեսակների ծագման աշխարհի հնագույն կենտրոններից մեկը: Կա տեսություն, որ հրաբխային և սեյսմիկ գոտիներն էվոլյուցիայի օրրաններ են եղել»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Նարեկ Գրիգորյանը, Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) տնօրեն Լևոն Աղասյանը, «BirdsLink Armenia» կազմակերպության նախագահ Կարեն Աղաբաբյանը:

Գիտաժողովում ներկայացվեցին զեկուցումներ Հայաստանի թռչնաշխարհի պոպուլյացիաների, չղջիկների, սարդերի և մողեսների բազմազանության, մարդ-վայրի բնության հակամարտության, անողնաշարավորների և մակաբույծների, բույսերի և սնկերի կենսաբազմազանության, Սևանա լճի ճահճացման դինամիկայի, ջրային կենսաբազմազանության պահպանման, Հայաստանի անտառների, կլիմայական գործընթացների, ինչպես նաև կենսաբազմազանության և կայուն զարգացման վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակ»-ի հայցման 2025 թ. հայտերի մրցույթ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) հայտարարում է **«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակի»** (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ մրցանակ) հայցման 2025 թ. հայտերի մրցույթ:

ՀՀ ԳԱԱ մրցանակ շնորհվում է հետևյալ բնագավառներում՝

- **ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտություններ (երկու անվանակարգ՝ հիմնարար հետազոտություններ և կիրառական մշակումներ),**
- **քիմիա, կյանքի և Երկրի մասին գիտություններ (երկու անվանակարգ՝ հիմնարար հետազոտություններ և կիրառական մշակումներ),**
- **հասարակական և հումանիտար գիտություններ (մեկ անվանակարգ՝ հիմնարար հետազոտություններ),**
- **բժշկագիտություն (մեկ անվանակարգ՝ կիրառական մշակումներ):**

Հիմնարար հետազոտությունների ոլորտում ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում ձեռք բերված կարևորագույն հիմնարար գիտական արդյունքների, արժեքավոր գործի, հայտնագործության կամ աշխատանքների շարքի համար, իսկ կիրառական մշակումների դեպքում՝ վերջին 10 (տասը) տարիների ընթացքում ստացված գիտատեխնոլոգիական և/կամ գիտաարտադրական արդյունքների, ապրանքայնացման պատրաստ կամ ներդրված կիրառական մշակումների համար:

ՀՀ ԳԱԱ մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ: Յուրաքանչյուր մրցանակի դափնեկիրների թիվը չպետք է գերազանցի 5 (հինգ)-ը: Մեկ անգամ մրցանակ ստացած անձն իրավունք չունի երկրորդ անգամ հավակնել այն ստանալու: Մրցանակները շնորհվում են համանուն վկայագրի և դրամական պարգևի ձևով: Յուրաքանչյուր մրցանակի դրամական պարգևի չափը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ: **Մրցանակաբաշխությունն իրականացվում է «ՄԱՐՏԻՆ ՍԹԱՐ» և «ԼԻԿՎՈՐ» կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ**:

ՀՀ ԳԱԱ մրցանակի հայտեր կարող են ներկայացնել ՀՀ գիտական և/կամ գիտակրթական և/կամ գիտաարտադրական կազմակերպությունների աշխատակիցները կամ դրանց խմբերը՝ կազմակերպության ղեկավարի կամ գիտական խորհրդի երաշխավորությամբ: Խմբերի կազմում կարող են ներգրավվել նաև տվյալ հայտի շրջանակում համատեղ աշխատանքներ իրականացրած օտարերկրյա գիտնականները: Ներկայացնող կազմակերպությունը յուրաքանչյուր անվանակարգում կարող է առաջադրել միայն 1 (մեկ) աշխատանք:

Հայտում կարող են ներկայացվել բացառապես այն արդյունքները, որոնք առաջին անգամ հրատարակվել, հրապարակվել կամ ապրանքայնացման տարբեր աստիճաններ են անցել հայտերի ներկայացման ժամկետին նախորդող 5 (հինգ) և 10 (տասը) տարիների ընթացքում՝ համապատասխանաբար հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների դեպքում: Հայտը չպետք է պարունակի արդյունք(ներ), որի(որոնց) համար հեղինակ(ներ)ը կամ այլ անձինք արդեն ստացել են ՀՀ ԳԱԱ մրցանակ կամ այն(դրանք) վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում արժանացել է(են) ՀՀ որևէ այլ պարգևի (ՀՀ Նախագահի մրցանակ, ՀՀ պետական մրցանակ, ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակ և այլն): Հայտերի գնահատման ժամանակ հաշվի են առնվելու՝

- հիմնարար հետազոտությունների դեպքում՝ գիտական աշխատանքի կամ շարքի գիտական ազդեցությունը, արդիականությունը, նորույթը, գիտական նոր ուսումնասիրություններ կամ ուղղություններ խթանելու հնարավորությունը, տվյալ գիտական ուղղությունից դուրս ազդեցության մակարդակը, գիտական համագործակցությունը խթանելու աստիճանը, հեղինակների ներդրումը, աշխատանքի ընդհանուր նկարագիրը և այլն,
- կիրառական նշանակության գիտատեխնոլոգիական/գիտաարտադրական մշակումների դեպքում՝ գիտական ազդեցությունը, նորույթը, լաբորատոր, փորձնական նմուշների, արդյունաբերական կամ սերիական արտադրության առկայությունը, պետական պատվերով կատարումը կամ տեղական/միջազգային շուկաներում վաճառքը, հաստատված լաբորատոր կամ արտադրական գիտատեխնիկական փաստաթղթերը, արտոնագրերը, առկա պահանջարկը՝ համագործակցության կամ պայմանագրային արտադրության համաձայնագրեր, առքուվաճառքի պայմանագրեր և այլն:

ՀՀ ԳԱԱ 2025 թ. մրցանակի մրցույթին պետք է ներկայացվեն հիմնարար հետազոտությունների 2020–2025 թթ. և կիրառական մշակումների 2015-2025 թթ. ընթացքում ձեռք բերված արդյունքները: Մրցույթի փաստաթղթերի ներկայացման ժամկետը 2025 թ. մայիսի 12-ից հուլիսի 11-ն է: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն 2025 թ. նոյեմբերի առաջին տասնօրյակում: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2025 թ. նոյեմբերի 10-ին՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրման օրը:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

1. դիմում-հայտ, իսկ համահեղինակության դեպքում՝ նաև մասնակցության համար համահեղինակների համաձայնությունը (լրացվում է առցանց («online») եղանակով),
2. հեղինակ(ներ)ի անձնագր(եր)ի և սոցիալական քարտ(եր)ի պատճենները,
3. հեղինակ(ներ)ի բանկային անձնական հաշվեհամար(ներ)ը,
4. հեղինակ(ներ)ի կենսագրական տվյալները («resume/CV»),
5. աշխատանքը ներկայացնող կազմակերպության ղեկավարի կամ գիտական խորհրդի որոշումը՝ աշխատանքը մրցույթին ներկայացնելու արժանիության վերաբերյալ,
6. հեղինակ(ներ)ի՝
   - վերջին 5 (հինգ) տարիների (2020-2025 թթ.) ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկը՝ հիմնարար հետազոտությունների դեպքում,
   - վերջին 10 (տասը) տարիների (2015-2025 թթ.) ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկը և գիտատեխնոլոգիական և/կամ գիտաարտադրական արդյունքների ապրանքայնացման մակարդակը հիմնավորող փաստաթղթերը՝ արտոնագրեր, կանոնակարգեր, շուկայական պահանջարկը հիմնավորող փաստաթղթեր, իրացման պայմանագրեր և այլն՝ կիրառական նշանակության գիտատեխնոլոգիական/գիտաարտադրական մշակումների դեպքում,
7. երեք երաշխավորագիր (կարծիք)՝ աշխատանքը մրցանակի արժանի լինելու վերաբերյալ՝ տրված տվյալ ոլորտի մասնագետների կողմից (նրանցից առնվազն մեկը պետք է լինի օտարերկրյա մասնագետ),
8. մրցույթին ներկայացվող աշխատանքի ընդհանուր նկարագիրը՝ մինչև 5 (հինգ) էջի սահմաններում՝ հայերեն և անգլերեն,
9. մրցույթին ներկայացվող աշխատանքը:

Մրցույթի փաստաթղթերի ներկայացման ընթացակարգը՝

- հայտատուն պետք է առցանց («online») լրացնի դիմում-հայտը հետևյալ հղումով՝ https://forms.gle/4Z69HoKhKxm3R89P7 (դիմում-հայտն ուղարկելուց առաջ անպայման հարկավոր է այն տպել և ստորագրել),
- հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթերի ցանկի 2-9 կետերում նշված ստորագրված փաստաթղթերի ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակները,
- փաստաթղթերի ցանկի 2-9 կետերում նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները հարկավոր է ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ sciorgdep@sci.am նամակի «Subject» դաշտում նշելով մրցույթի անվանումը,
- եթե ներկայացվող աշխատանքը կատարված է համահեղինակությամբ, դիմում-հայտին անհրաժեշտ է կցել տեղեկանք, որը կարտացոլի համահեղինակների մասնակցության չափը և ստորագրված կլինի համահեղինակների կողմից,
- առցանց («online») լրացված դիմում-հայտը տպված և ստորագրված, ինչպես նաև ներկայացվող փաստաթղթերի ցանկի 2-9 կետերում նշված փաստաթղթերի բնօրինակները ստորագրված և կնքված հարկավոր է ներկայացնել ՀՀ ԳԱԱ նախագահության գիտակազմակերպական բաժին հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ.՝ 010 58-36-79 (1-99), 010 56-81-83 (1-36):

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մրցանակը հիմնադրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության՝ 2023 թ. սեպտեմբերի 20-ի համար 9/1817 որոշմամբ: Մրցանակի շնորհման կարգին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.sci.am/documents.php?dcid=1&langid=1#top

---

Արթուր Իշխանյան. «Ոչինչ պարզ չէ, չգիտենք՝ ինչ են որոշելու, առայժմ ազդանշան չկա, որ ընդառաջ են գնացել մեր արտահայտած դիրքորոշմանը»



«Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքով Գիտությունների ազգային ակադեմիայի հետագա գործունեությունն ու ճակատագիրը դրվում են հարցականի տակ: Այս օրենքը նախատեսում է Ակադեմիան միավորել բուհերի հետ. առաջարկը ներկայացրել է կառավարությունը:

Օրենքը նաև նախատեսում է, որ ԳԱԱ ինստիտուտները միավորվելուց հետո արդեն կտեղափոխվեն Ակադեմիական քաղաք, երբ այն պատրաստ կլինի:

Դեռևս 2023 թվականի մարտին, երբ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ամփոփում էր գործունեության 100 օրը, անդրադարձել էր նաև այս հարցին: «Բարձրագույն կրթության և գիտության ինտեգրման հարցը նոր չէ, որ բարձրացվում է: Այս հարցի շուրջ աշխատանքը և վերլուծությունն արվում են արդեն մի քանի տարի, առկա են բազմաթիվ զեկույցներ: Կրթության զարգացման պետական ծրագրով, որը մեր առաջիկա տարիների ռազմավարությունն է ֆիքսել մի քանի հստակ թիրախներով, պետք է ունենանք պետական ֆինանսավորմամբ մինչև 8 բուհ, որոնք պետք է ունենան շատ ուժեղ, կայացած գիտահետազոտական բաղադրիչ: Թե ինչպես ենք անելու, հիմա քննարկվում է, ճանապարհներն ու մոտեցումները տարբեր են, ձևավորված է եղել աշխատանքային խումբ, որը պետք է պատրաստեր վերլուծական տեղեկանք տարբեր մոդելների և դրանց հնարավորությունների մասով, այստեղ ներգրավված է եղել նաև ԳԱԱ նախագահը, և տարբեր մոդելներ են ներկայացվել»,- ասել էր ԿԳՄՍ նախարարը:

ԳԱԱ-ն 2024 թվականի ապրիլի 3-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովի ժամանակ որոշում էր ընդունել «ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի մասին»:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանի խոսքով՝ այս հարցի վերաբերյալ ԳԱԱ դիրքորոշումն արդեն հայտնի է, և այն արտացոլված է 2024 թվականի ապրիլի 3-ին ընդունած որոշման մեջ:

«Այդ որոշումը մի քանի էջանոց փաստաթուղթ է, որտեղ տրված են պրոֆեսիոնալ պատասխաններ: Այս տարի տարեկան ժողովում մենք կրկին փաստեցինք, որ շարունակում ենք մնալ այդ կարծիքին:

Առայժմ ոչինչ պարզ չէ, մենք դեռևս չգիտենք, թե իրենք վերջնական ինչ են որոշելու: Առայժմ որևէ ազդանշան չկա, որ նրանք ընդառաջ են գնացել մեր արտահայտած դիրքորոշմանը: Սպասում ենք օրենքի լրամշակված տարբերակին, քանի որ օրենքի նախագծի վերաբերյալ եղել են մի քանի հարյուր էջի սահմաններում տարատեսակ դիտողություններ, որոնք եկել են և՛ ԳԱԱ ինստիտուտներից, և՛ բուհերից, և՛ արտերկրի մեր գործընկեր-գիտնականներից: Հիմա չկա վերջնական լրամշակումը, որպեսզի դրա շուրջ տեղի ունենա քննարկում»,- 168.am-ի հետ զրույցում ասաց Արթուր Իշխանյանը:

Հիշեցնենք, ԳԱԱ 2024 թվականի ապրիլի 3-ին ընդունած որոշման մեջ մասնավորապես նշվում է.

«Տեղային ու աշխարհաքաղաքական իրողությունների ներկա պայմաններում գիտության և բարձրագույն կրթության ավանդական մոդելի կտրուկ ու արմատական փոփոխությունը նպաստավոր չէ երկու ոլորտների համար էլ:

Անթույլատրելի է բոլոր բուհերը և գիտական կազմակերպությունները մեկ վայրում կենտրոնացնելը ռազմավարական ու անվտանգային նկատառումներով:

Անհրաժեշտ է ապահովել գիտական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանություն. բուհերը պետք է ունենան ժամանակակից գիտահետազոտական բաղադրիչ/միավորներ, սակայն պետք է լինեն նաև ինքնուրույն, առանձին գործող, հիմնականում գիտական և գիտատեխնոլոգիական գործունեություն իրականացնող կազմակերպություններ կամ դրանց համակարգեր:

ՀՀ պետական բուհերի խոշորացման ու արդիականացման ընթացքում չպետք է խաթարվեն Հայաստանի գիտության կայուն զարգացումն ու գիտատեխնոլոգիական առաջընթացը:

Նպատակահարմար է, որ ԳԱԱ գիտական կազմակերպությունների տնօրենների խորհուրդը քննարկի ակադեմիայի դիրքորոշումները «ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի» վերաբերյալ և դրանք ներկայացնի համապատասխան աշխատանքային խմբերի»:

168.am, 2 մայիսի, 2025 թ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(Հաղթանակի 80-ամյակի առթիվ)

Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև հայ ժողովուրդը: Նրա ավելի քան 600 000 զավակներ մասնակցեցին պատերազմին, որոնցից շուրջ 200 000-ը զոհվեցին մարտերում: Խորհրդային Միությունից պատերազմին մասնակցել է ավելի քան 500 000 հայ, որոնցից շուրջ 300 000-ը՝ Խորհրդային Հայաստանից, մոտ 200 000-ը՝ մյուս հանրապետություններից: Ավելի քան 100 000 հայեր ֆաշիզմի դեմ մարտնչել են արտասահմանյան երկրների զինված ուժերի, դիմադրական և պարտիզանական շարժման շարքերում:

Պատերազմին հայ ժողովրդի զավակները տարբեր զորատեսակների շարքերում մասնակցեցին բոլոր նշանավոր ճակատամարտերին, պաշտպանողական ու հարձակողական գործողությունների ժամանակ ցուցաբերեցին խիզախության և հերոսության բազում օրինակներ: Ընդհանուր առմամբ հայերից Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 106 հոգու, որոնցից 4-ին՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում, 99-ին՝ Հայրենական մեծ պատերազմում և 3-ին՝ հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի: Անօրինակ սխրանքների համար 26 հայ ռազմիկներ պարգևատրվել են «Փառքի» երեք աստիճանների շքանշաններով ու դարձել այդ պատվավոր շքանշանի լրիվ ասպետներ (ինչը հավասարազոր էր հերոսի կոչման):

Մեծ հայրենականին մասնակցել են 69 հայ գեներալ, 1 ծովակալ (Հ. Իսակով) և 1 ավիացիայի մարշալ (Ա. Խուդյակով - Ա. Խանփերյանց): Հետպատերազմյան շրջանում պատերազմի մասնակից 83 հայորդու նույնպես շնորհվել է գեներալի կոչում: Այսպիսով, Հայրենական պատերազմի մասնակից հայերից 152-ին շնորհվել է գեներալի կոչում: Նրանցից Հովհաննես Բաղրամյանին 1955թ. շնորհվել է Խորհրդային Միության մարշալի կոչում: Նույն թվականին Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում է շնորհվել Հովհաննես Իսակովին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից ծովակալ Հ. Իսակովը եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հրամանատարի 1-ի տեղակալ՝ ծովային գլխավոր շտաբի պետ, ավիացիայի մարշալ Ս. Խուդյակովը՝ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի 1-ին տեղակալ՝ ռազմաօդային ուժերի շտաբի պետ, բանակի գեներալ Հ. Բաղրամյանը՝ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար: Պատերազմի տարիներին հայ զորավարներից 3-ը եղել են բանակի, 8-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 100-ից ավելին բրիգադայի և գնդի հրամանատարներ և այլն:

Պատերազմի տարիներին Կարմիր բանակի կազմում գործել են 6 հայկական դիվիզիաներ, որոնց շարքերում մարտնչել են ավելի քան 60 000 հայ ռազմիկներ, որոնք ակտիվորեն մասնակցել են Կովկասի և Ստալինգրադի ճակատամարտերին, Ղրիմի, Լեհաստանի, Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը: Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան իր փառապանծ մարտական ուղին ավարտել է Բեռլինում՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդն են ներդրել նաև հայ պարտիզանները: Միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ շուրջ 500 հայ պարտիզաններ:

Ֆաշիզմի դեմ պայքարին մասնակցել են նաև սփյուռքահայերը: Այսպես օրինակ, ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20 000 հայեր, մոտ 30 000 հայեր կային Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում: Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսներից էր Միսաք Մանուշյանը, որի խմբին մեծ օգնություն է ցույց տվել Շառլ Ազնավուրի ընտանիքը: Սփյուռքահայերի հանգանակությամբ կազմավորվեցին «Գեներալ Բաղրամյան» տանկային 2 շարասյուն, որոնք մարտնչեցին Կարմիր բանակի շարքերում:

Մեծ հայրենականի հաղթանակին նպաստեց նաև անտեսանելի ճակատի լեգենդար հետախույզներ՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովակիմյանի, գեներալ-մայորներ Իվան Աղայանի, Միքայել Ալավերդյանի, Վյաչեսլավ Գևորկովի, Խորհրդային Միության հերոս Գևորգ Վարդանյանի և շատ ուրիշների հերոսական աշխատանքը:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորները: Նրանց հայրենանվեր աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեց 30 նոր արդյունաբերական ձեռնարկություն, որոնց թվում՝ ավիացիոն, կոմպրեսորների, ժամացույցների, շարժիչավերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերքի: Պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածքների մակերեսները, այլև զգալի չափով դրանք ավելացան:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում անմասը չմնացին նաև գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության բնագավառների աշխատողները: Չնայած պատերազմական ծանր պայմաններին՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի հիման վրա 1943 թ. նոյեմբերի 29-ին բացվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, որը պատմական խոշոր երևույթ էր հայ իրականության մեջ: Հայ գիտնականներն իրենց ամբողջ կարողությունները նվիրաբերեցին հաղթանակի ապահովման գործին:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում արժանահիշատակ է նաև ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և երկրի տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչների, գիտնականների, կոնստրուկտորների և այլոց հայրենանվեր գործունեությունը: Բավական է թվարկել նրանցից մի քանիսի անունները՝ Անաստաս Միկոյան, Իվան Թևոսյան, Արտեմ Միկոյան, Համո Յոլյան, Ստեփան Ակոպով, Սուրեն Աղաջանով, Լևոն Օրբելի և շատ ուրիշներ:

Պատերազմի տարիներին հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչմանն են արժանացել 8 հայորդիներ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից մինչև հաղթական ավարտը Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, Կարմիր բանակի մարտական զինանոցի, որտեղից «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով, ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն:

Թե՛ ռազմի դաշտում և թե՛ թիկունքում հայ ժողովուրդն ունեցավ արժանի ներդրում Մեծ հայրենականի հաղթանակի ապահովման գործում:

Կլիմենտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր

Միջազգային գիտաժողով ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 2025 թ. մայիսի 6-ին ինստիտուտում տեղի ունեցավ «Հայ ժողովուրդը Համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներում. չլուսաբանված էջեր» խորագրով միջազգային գիտաժողով՝ նվիրված Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներում տարած հաղթանակի 80-ամյակին: Գիտաժողովի նպատակն էր ցույց տալ հայ ժողովրդի զգալի ավանդը պատերազմներում տարած հաղթանակում, անդրադառնալ հայության, առանձին անհատների մասնակցության չլուսաբանված էջերին և այլն:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

Միջազգային գիտաժողովին մասնակցում էին ինչպես Պատմության ինստիտուտի, Հանրապետության տարբեր բուհերի և գիտահետազոտական հաստատությունների առաջատար մասնագետները, այնպես էլ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ընդհանուր պատմության ինստիտուտի պատվիրակությունը՝ ի դեմս միջազգային գիտական համագործակցության բաժնի վարիչ, պ.գ.թ. Վիկտոր Իշչենկոյի, գիտական քարտուղար Մաքսիմ Յակովլևի և կրտսեր գիտաշխատող Տատյանա Մելնիչենկոյի: Վերջիններս պարգևատրվեցին Պատմության ինստիտուտի «Մովսես Խորենացի» հուշամեդալով:

Պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պ.գ.դ. Կլիմենտ Հարությունյանը ծննդյան 85-ամյակի և Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար նույնպես պարգևատրվեց ինստիտուտի հուշամեդալով:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան երկու տասնյակից ավելի գիտնականներ:

Հ1-ի հերթական սադրանքը

Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ին, Հանրային հեռուստաընկերությունը եթեր հեռարձակեց Պետրոս Ղազարյանի և Արծրուն Հովհաննիսյանի՝ օրվա խորհրդին նվիրված մի հարցազրույց, որի ընթացքում Հայրենական մեծ պատերազմի վերաբերյալ հնչեցին մտքեր, և արվեցին ինչ-որ «միֆերի բացահայտումներ», որոնք մեր հանրության ամենալայն շրջաններում արդարացի վրդովմունք և զայրույթի ալիք առաջացրին: Հարցազրույցը ոչ այլ ինչ էր, եթե ոչ տխրահռչակ երկու անձանց կողմից պատմական իրողությունների հերթական խեղաթյուրման դատապարտելի ու անգրագետ մի փորձ:

ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին ուղղված բաց նամակում իր խորին մտահոգություններն է հայտնել այդ հարցազրույցի կապակցությամբ: Մեջբերենք մի հատված այդ նամակից.

«Հայ ժողովրդի կողմից Հաղթանակի օրվա հանդեպ խոր հարգանքի ֆոնին լայն վրդովմունք են առաջացրել այդ սուրբ օրը երկրի գլխավոր հեռուստաալիքով ՀՀ ՊՆ նախկին պաշտոնական ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանի հնչեցրած պատմականորեն կեղծ և սրբապիղծ հայտարարությունները, որոնք փաստորեն արդարացնում են հիտլերյան Գերմանիայի ագրեսիան: Հատկապես ցավալի էր նման հայտարարություններ լսել մի մարդու շուրթերից, ով այժմ ղեկավարում է ՀՀ ՊՆ ռազմական ակադեմիայի հրամանատարաշտաբային ինստիտուտը, որը կրում է Հայրենական մեծ պատերազմի փառապանծ զորահրամանատար, Խորհրդային Միության կրկնակի հերոս մարշալ Բաղրամյանի անունը:

Դժվար է գնահատել նման կարգի արարքը այլ կերպ, քան մեր հերոս նախնիների հիշատակը պղծելու փորձ...»:

Բացառապես հանրության վճարած հարկերի հաշվին գոյատևող Հ1 հեռուստաընկերությունը այդ տոնական օրը, հանձին սկանդալային համբավ ունեցող և իրենց ամենագետ համարող Պետրոս Ղազարյանի և Արծրուն Հովհաննիսյանի, փորձեց նսեմացնել Մեծ հայրենականի և հաղթանակի պատմական նշանակությունը:

Պատմաբան Արծրուն Հովհաննիսյանը եթե փաստարկված «նոր ասելիք» ուներ, ապա հարկ էր դա նախ քննարկել գիտական հանրության շրջանում, այլ ոչ թե եթերով, որպես ճշմարտության վերջին խոսք, հանրային մեծ լսարանին պարտադրել սեփական մտավարժանքները: Գործող իշխանությունների քաղաքական օրակարգը սպասարկող այդ չարաբաստիկ հարցազրույցը հանրային անհամերաշխության խորացմանը նպատակաուղղված հերթական բացահայտ սադրանքն էր:

Խմբագրություն

Ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Աբրահամյանի ծննդյան 100-ամյակի առիթով կազմակերպվել էր երկօրյա (19-20 մայիսի 2025 թ.) միջազգային գիտաժողով, որը նախաձեռնել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանները:

Գիտական նստաշրջանի բացումը, լիագումար, ինչպես նաև առաջին նիստը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը, այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ս. Գևորգյանը, Կանադայի ՄաքԳիլ համալսարանի պրոֆեսոր Դ. Սաքայանը, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դոցենտ Դ. Մկրտչյանը, ակադեմիկոս Ս. Աբրահամյանի դուստրը՝ ԵՊՀ դոցենտ Ա. Աբրահամյանը, ինչպես նաև ակադեմիկոսի ընկերը՝ ակադեմիկոս Լ. Աղալովյանը:

Հնչած բոլոր խոսքերում արժևորվեցին ոչ միայն ակադեմիկոս Ս. Աբրահամյան գիտնականը, մտավորականը, հայագետը, մանկավարժը, այլև նրա թողած գիտական պատկառելի ժառանգությունն ու հայրենանվեր գործունեությունը:

Երկօրյա գիտական նստաշրջանում հնչած 34 զեկուցումները նվիրված էին տարբեր թեմաների. Սերգեյ Աբրահամյանի կենսագործունեությանը, նրա գիտական վաստակին, լեզվի համաժամանակյա և տարժամանակյա գոյավիճակներին, ժամանակակից հայերենի կառուցվածքին, հայերենի կանոնարկմանը, լեզվաբանական տարատեսակ խնդիրների:

Միջազգային գիտաժողովի երկրորդ օրը շարունակվեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

Գիտական նստաշրջանը ակադեմիկոս Ս. Աբրահամյանի՝ գիտնականի, մարդու և քաղաքացու կենսագործունեության, գիտական պատկառելի վաստակի, գնահատանքի և արժևորման յուրահատուկ ստուգատես էր: Եվս մեկ անգամ ապացուցվեց, որ ակադեմիկոս Ս. Աբրահամյանի գործունեությունն ընդգրկուն է և բազմակողմանի. նա ուսումնասիրել է ժամանակակից հայերենի ամբողջ համակարգը՝ անդրադառնալով կառուցվածքային բոլոր բաժիններին, կատարել գիտական լուրջ վերանայումներ, ճշգրտումներ, գրել դրանց վերաբերող մեծարժեք աշխատություններ: Վաստակաշատ լեզվաբանը զբաղվել է ոչ միայն մայրենի լեզվի ուսումնասիրման, նրա կանոնարկման հարցերով, այլև իրեն բնորոշ նվիրումով ու նախանձախնդրությամբ ստանձնել է լեզվի պաշտպանության պատասխանատվությունը՝ միշտ լինելով նրա մաքրության ու անաղարտության համար պայքարողների առաջնագծում:

Մեծ է նրա վաստակը նաև գիտական կադրեր պատրաստելու հայրենանվեր ուշնորհական գործում: Նրա ղեկավարությամբ ու արժեքավոր խորհրդատվությամբ գիտության շեմն են անցել երկու տասնյակից ավելի ինչպես հայաստանաբնակ, այնպես էլ արցախաբնակ գիտաշխատողներ՝ պաշտպանելով թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, նրանք գիտամանկավարժական գործունեություն են ծավալել և ծավալում հանրապետության տարբեր բուհերում, ինչպես նաև գիտահետազոտական հիմնարկներում՝ շարունակելով աբրահամյանական դպրոցի ավանդույթները: Ս. Աբրահամյանի գիտական գործունեության մաս էր նաև գիտական-կազմակերպչական աշխատանքը: 1959 թ.-ից մինչև կյանքի վերջը նա հմտորեն ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայերենի բաժինը: Նա իր գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ նաև ակտիվ, սրտացավ, պատասխանատու, նախաձեռնող, արժանապատիվ քաղաքացի էր, արձագանքում էր ժամանակի խնդիրներին, առաջարկում բարեփոխման, լուծման իր ուղիները:

2005 թ.-ի մարտի 30-ին իր ծննդյան 80-ամյակը դեռ նոր բոլորած՝ կյանքից հեռացավ հայագիտության անխոնջ նվիրյալը՝ թողնելով խոր ցավ և լուսավոր հետագիծ իր հարազատների, մերձավորների, սաների և գործընկերների հոգիներում: Մնացին լուսավոր հուշերը, ծանրակշիռ վաստակը և այն լուրջ արժեքները, որ ստեղծել է ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանը:

Արմենուհի ՄԽԻԹԱՐՅԱՆ
Բ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս

Ռուբեն Սաֆրաստյան. Նեոնացիզմը փորձում է ջնջել հիշողությունը Մեծ հաղթանակի մասին

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի գնահատմամբ այսօր ականատեսն ենք գլոբալ գործընթացների, որը չէր կարող կանխատեսել այն սերունդը, որը ձևավորվել էր հիտլերյան նացիզմի դեմ տարած Մեծ հաղթանակի ոգով: Նրա գնահատմամբ նացիզմի վերածնունդը տարբեր ձևերով ու գաղափարական արտահայտություններով վերադառնում է միջազգային օրակարգ՝ դառնալով լուրջ սպառնալիք ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար:

- Այս վտանգավոր գործընթացը դրսևորվում է ոչ միայն քաղաքական կամ ռազմական ոլորտում, այլև պատմական հիշողության ձևափոխման, մանիպուլյացիայի և վերագրման ճանապարհով: Առկա են ակնհայտ ջանքեր՝ խաթարելու Խորհրդային Միության դերը ոչ միայն Երկրորդ համաշխարհային, այլ նաև Մեծ հայրենական պատերազմում: Շատ դեպքերում սա արվում է միտումնավոր՝ մոռացության մատնելու համար այն փաստը, որ ԽՍՀՄ-ը, ի վերջո, ազատագրեց Եվրոպան նացիզմից:

Այս համատեքստում ցանկանում եմ կարևորել մեկ ուշագրավ, բայց քիչ հայտնի փաստ: Եթե Մեծ հայրենական պատերազմում Խորհրդային Միության ժողովուրդների մասնակցությունն ուսումնասիրենք տոկոսային հարաբերակցությամբ, կտեսնենք, որ հենց հայ ժողովուրդն է տվել ամենաբարձր մասնակցության տոկոսը՝ նույնիսկ գերազանցելով ռուս ժողովրդին: Այս հանգամանքը, կարծում եմ, պայմանավորված էր ոչ միայն խորհրդային հայրենասիրությամբ, այլև հայ ժողովրդի պատմական հիշողությամբ, մասնավորապես Հայոց ցեղասպանության վերապրածների միջանձնային և հավաքական գիտակցությամբ: Նացիզմի գաղափարախոսությունը՝ որպես մի ազգի գերազանցության գաղափար մյուսների նկատմամբ, հայերի համար ճանաչելի էր ոչ թե տեսական մակարդակում, այլ որպես ապրած ողբերգություն:

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին թուրքական էլիտան, մասնավորապես «թանզիմաթի» արևմտամետ գործիչները, ձևավորել էին այն գաղափարը, որ միայն թուրք ժողովուրդն ունի բացառիկ իրավունք ու կարողություն՝ կառավարելու Օսմանյան կայսրությունը: Այս բացառիկության գաղափարը, որը նացիզմի ու ֆաշիզմի հիմքում ընկած առանցքային սկզբունքն է, դրսևորվել է դեռ շատ ավելի վաղ, քան նացիստական Գերմանիան այն ինտելեկտուալացրել ու համակարգել էր:

Բացի այդ, կան ակադեմիական հիմքով լուրջ ուսումնասիրություններ, որ Հիտլերը որոշ գաղափարներ և մոտեցումներ վերցրել է Աթաթուրքից: Գերմանացի հեղինակների կողմից լույս ընծայված մենագրություններում պարզ երևում է, որ Աթաթուրքը Հիտլերի համար ընկալվում էր որպես օրինակ ազգայնական պետության կառուցման տեսանկյունից: Այդ կապը դրսևորվում է նաև Լեհաստանի վրա հարձակվելուց առաջ Հիտլերի արտահայտությունում, որտեղ նա գերմանացի սպաներին ուղղված իր խոսքում փաստացի արդարացնում էր սպանդը՝ նշելով. «Տեսեք՝ ինչ արեցին թուրքերը հայերի հետ, և նրանք այդպես էլ չպատժվեցին»: Այսպիսով, Հայոց ցեղասպանության անպատիժ մնալը դարձավ նախադեպ նոր հանցագործությունների համար:

Այս համատեքստում պանթյուրքիզմը՝ որպես տուրբոազգայնական գաղափարախոսություն, վերածնունդ ապրեց հատկապես նացիստական Գերմանիայի հետ համագործակցության պայմաններում: Երբ նացիստները հարձակվեցին ԽՍՀՄ-ի վրա, Թուրքիան, կուտակելով գրեթե բոլոր զինված ուժերը խորհրդային սահմաններին, սպասում էր Ստալինգրադի ճակատամարտի ելքին՝ հարմար պահ ընտրելու համար: Նպատակը պարզ էր՝ մուտք գործել Հարավային Կովկաս, իրագործել «Մեծ Թուրանի» գաղափարը և վերահսկողություն սահմանել ողջ տարածաշրջանի նկատմամբ:

Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակը ոչ միայն բեկումնային էր ֆաշիզմի դեմ պայքարում, այլ նաև կանխեց թուրքական պանթյուրքիստական նկրտումները՝ փրկելով Հարավային Կովկասի ժողովուրդներին նոր ցեղասպանությունից: Մասնավորապես կանխվեց հայ ժողովրդի նկատմամբ հնարավոր ֆիզիկական բնաջնջումը, որի գաղափարական հենքերը վաղուց ձևավորված էին պանթյուրքիստական շրջանակներում:

iravunk.com , 7 մայիսի, 2025 թ.



Գրքի շնորհանդես

Սույն թվականի մայիսի 6-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի ունեցավ «Պատերազմ և հիշողություն. Արցախյան երկրորդ պատերազմի հուշարձանացման հիմնախնդիրը» (հեղինակներ՝ Գ. Աթանեսյան, Մ. Գալստյան, Գ. Հակոբյան, Լ. Անգելուշ) վերտառությամբ գրքի շնորհանդեսը:

Մենագրության մեջ քննարկվում են Արցախյան երկրորդ պատերազմի հանրային և պաշտոնական հիշման գործընթացները՝ պատերազմի հուշարձանացման ու զոհերի հիշատակման պրակտիկաների օրինակներով: Հետազոտության մեջ դիտարկվում են պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների տեղադրման դերակատարները և նրանց ակտիվության շարժառիթներն ու նպատակները:

Հեղինակների կողմից 2021-2023 թթ. իրականացված որակական հետազոտության հիման վրա վերլուծվում են Արցախյան առաջին պատերազմի և 2020թ. պատերազմի զոհերին նվիրված հուշարձանների տեղադրման, հիշողության տարածքների ընտրության, հուշարձանացման դերակատարների, զոհերի հիշատակման պաշտոնական և ոչ պաշտոնական պրակտիկաների նորահայտ վիրտուալ դրսևորումները, հետպատերազմյան առօրյայում հիշողության լանդշաֆտի խնդիրները: Գիրքը կարող է հետաքրքրել հումանիտար ու հայագիտական ոլորտի մասնագետներին և ընթերցող լայն հանրությանը:

Գիրքը հրատարակվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացվող 21T-6A136 գիտական նախագծի շրջանակում կատարվող աշխատանքների արդյունքում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

«Հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից»

Գարեգին Նժդեհ

Մայիս ամիսը մեր ժողովրդի համար եղել է, կա և կմնա որպես հաղթանակի խորհրդանիշ. Ավարայր, Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա, Շուշի… Հաղթանակներ, որոնք մեր ժողովրդի հոգու պոռթկման, ազգային միաբանության և հայրենասիրության խոսուն վկայությունն են: Խորհրդանշական է նաև, որ դարեր անց՝ 1918 թվականի հենց մայիսին, վերականգնվեց հայոց պետականությունը՝ հիմնադրվեց Հայաստանի Առաջին հանրապետությունը:

Պարույր Սևակի գնահատմամբ՝ չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը: Այն դարեդար փոխանցվել է սերնդեսերունդ՝ պայմանավորված մեր ժողովրդի պատմական հիշողությամբ, հայոց հողի և արյան կանչով: Անանց է մայիսյան հաղթանակների պատմական նշանակությունը և անչափ կարևոր՝ դրանցից անհրաժեշտ դասեր քաղելը: Մանավանդ նրանց համար, ովքեր ինքնակոչ ստանձնել են Հայոց պատմության վերախմբագրման, պատմական դեպքերի և դեմքերի վերաարժևորման անշնորհակալ գործը՝ չունենալով դա անելու ո՛չ իրավունք և ո՛չ էլ անհրաժեշտ մասնագիտական կարողություններ:

Հայրենիք, հայրենասիրություն և հերոսություն եզրույթները վերջին տարիներին դարձել են անհարկի շահարկումների առարկա: Այդ հասկացությունների հստակ թիրախավորումը նպատակաուղղված է հանրության լայն շրջաններում դրանց բովանդակային արժեզրկմանը: Պաշտոնական խոսույթի համաձայն՝ Հայրենիքը միայն «իրական» Հայաստանն է, հայրենասիրությունը փուչիկ է ու վտանգավոր գաղափար, հերոսը հարկ վճարողն է, Արևմտյան Հայաստանը Արմավիրի, Արագածոտնի մարզերն են և այլ աբսուրդային մտքեր: Իշխանությունների քաղաքական օրակարգից իսպառ դուրս են մղվել Հայոց ցեղասպանության, պահանջատիրության, արցախյան և հայ ժողովրդի համար կենսական այլ հիմնահարցեր:



Հանրությանը մեծ չափաբաժիններով ներարկվում է նաև մեկ այլ «գաղափար», ըստ որի՝ մեր պատմական հայրենիքի միայն 10%-ը կազմող ներկայիս Հայաստանի տարածքից դուրս ինչ եղել է անցյալում, չպետք է հիշել, իսկ ինչ կատարվում է այսօր, մեզ չի վերաբերում: Զորօրինակ՝ արցախյան շարունակվող ողբերգությունը: Այս թեզի համաձայն՝ Հայրենիք հասկացությունը կիրառելի է ընդամենը 29 հազար ք/կմ տարածքի համար, իսկ պատմական հայրենիք, Արևմտյան Հայաստան, հայրենազրկում, պահանջատիրություն եզրույթները պետք է մեկընդմիշտ մոռանալ: Ակներև է պատմագիտության հետ որևէ աղերս չունեցող այս թեզի հոգեհարազատությունը թուրքական հայտնի նարատիվներին:

Ցավոք, անցյալից դասեր չքաղելը, ազգային շահերի շարունակական անտեսումը, ներկայիս իրողությունների հորձանուտում ճիշտ չկողմնորոշվելն ու ապագային միտված հստակ տեսլականի բացակայությունը մեզ բաղձալի հանգրվանի չեն հասցնի: Հայ ժողովրդի պատմական հիշողությունը, ազգային հոգեկերտվածքն ու նկարագիրը խաթարող նման անբովանդակ մտավարժանքները, հայրենասիրությունն ու ազգային արժանապատվությունը նսեմացնող գաղափարների քարոզը նպատակաուղղված են հանրային անհամերաշխության խորացմանը և մեր փոքր երկրի համար կարող են ունենալ լրջագույն հետևանքներ:

Հազարամյակների պատմություն ունեցող Հայոց աշխարհը երկնել է հայրենասեր դյուցազունների մի ամբողջ համաստեղություն, իսկ մեր դարավոր պատմությունը լի է հանուն հայրենյաց հերոսության բազում վառ օրինակներով: Հայկական լեռնաշխարհն իր Արարատ, Նեմրութ, Սիփան գագաթներով, իր մայր Արաքսով ու Վանա լճով եղել է հայոց բնօրրանը, իսկ թվարկված տեղանուններն էլ դարձել են ազգային ինքնության խորհրդանիշներ: Եվ ինչ եղել է այդ տարածքում, դա մեր պատմությունն է, որը չի կարելի ո՛չ խմբագրել, ո՛չ մոռացության մատնել, առավել ևս՝ մեզնից օտարել:

Խմբագրություն

Թող մարեն աչքերս, միայն թե թող ծագի Հայաստանի անկախության արևը

Գևորգ ՉԱՈՒՇ

Այս տարի լրանում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Գևորգ Չաուշի ծննդյան 155- ամյակը (1870-1907թթ.): Թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի տարեգրության անմոռաց էջերից են հայրենասեր քաջորդու հերոսական սխրանքները: Նա իր կյանքը նվիրեց հանուն հայրենյաց: Տակավին երիտասարդ՝ 37 տարեկան հասակում Չաուշը զոհվեց Մշո դաշտի Սուլուխի կամրջի մոտ տեղի ունեցած մարտում (1907թ. մայիսի 27):

Ընթերցողին ենք ներկայացնում բանաստեղծ-արձակագիր Ռաֆայել Սահակյանի «Չաուշի վերջին պատգամը» պոեմից մի հատված:

Հազար ինը հարյուր յոթ թվականի
Մայիս ամսվա քսան և յոթին
Սասնա էպոսում մի նոր ճյուղ գրվեց,
Մի նոր Սասնա ծուռ ելավ Ծովասար,
Գնաց արևից կրակ խրձելու,
Կայծակի անթել բոցին հավասար -
Իր պապ Մհերի ոգին թրծելու:
Նրա աչքերում Տարոնի գարուն,
Ցավից վիրավոր՝ տխրաբույր արև,
Առյուծ սրտի մեջ Դավթի խաս արյուն
Եվ Անդոկ սարին կարոտած բարև:
... Ասում են ամեն ծաղկած մայիսին
Սուլուխի կապույտ ժայռերի վրա -
Աստղերն իջնում են խոնարհված ծեսի
Եվ կակաչները արյունով նրա
Պատարագում են մորմոքը լույսի.
Ամպը թնդում է, կայծակն է լալիս -
Լուրեր են տանում որդուն՝ Վարդգեսին:
Ասում են՝ նաև Աստծո այդ ժամին
Գևորգն է իջնում աստղերով յոթնյակ,
Տարոնի դաշտից փչում է քամին,
Սարերն են գվվում հանց գժված փեթակ:
Չաուշը խոժոռ վրեժով վառման -
Դարձյալ տեսնում է Տարոնը գերված,
Մռնչում ամպի թևերով անահ,
Տեսնում է իրեն անհույս զարկված
Եվ անեծքի պես շշնջում աղոթք.
Սասնա ծռերի կեծակն ո՞ւր գնաց,
Արծիվներ թռա՞ն Անդոկասարից,
Մըր խաս փեթակի մեղրն ո՞ւմ մնա՜ց -
Մհե՛ր, դո՛ւրս արի Ագռավու քարից...

ՉԱՅՆ ՄԵԾԱՑ.

«Մենք բարեկամ չունենք և չենք էլ կարող ունենալ, քանի որ մենք ինքներս մեզ բարեկամ չենք: Ով իր ազգն ու Հայրենիքը չի սիրում, իրավունք չունի օտարներից սեր պահանջելու: Մեր թշվառ վիճակը մենք ենք ստեղծել մեզ համար, ուրիշ ոչ ոք մեղավոր չէ…»:

ՐԱՖՖԻ

Պինդ բռնէ հողը, մի՛ թողուր, որ ուրիշը յափշտակէ, յետոյ շատ կը զղջաս, անգամ մը որ հողը կորսնցնես, մուրացկան կը դառնաս:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Ամեն ոք ազգին սիրով լոկ արբշիռ, ազգին ոգվով հաղորդված, պիտի վառի, բորբոքի, որ Թորգոմա տունն զգա, թե իր օջախը մարած այսօր հրաբուխ է դարձեր:

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Զգացնե՛լ տուր թշնամիիդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կհրաժարվի զինու ուժով քեզ անհանգստացնելու մտքից:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացություններ: Նա ոչ միայն ինքը չստեղծագործեց ու ոչ մի հանճարեղ բան չտվեց աշխարհքին, այլև դրսից չընդունեց ոչինչ ու չմշակեց: Միշտ մնաց սուրը ձեռքին ավերող:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մի ժողովրդի հայրենի հողը չի՛ կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Երբ վախկոտները դառնում են հերոսներ, իսկ հերոսները մոռացվում են, այդ ժամանակ աշխարհում տիրում է անբարոյականությունը: Մի՛ հերոսացրեք նրան, ով անգամ չգիտի՝ ինչ է հայրենիքը:

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆ

Որպեսզի թշնամիքդ քեզ հարգեն, պատժի՛ր ազգիդ դավաճաններին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՕՋԱՆՅԱՆ

«Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումն ուսումնական գործընթացում» համահայկական գիտաժողովը

Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումն ուսումնական գործընթացում» համահայկական գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Աթայանը: «Աշխարհի բոլոր գիտությունները հայոց լեզվով են դառնում հայաշունչ և հայահունչ: Մեր լեզուն հետաքրքիր ու հարուստ է: Բայց կյանքը, հասարակական զարգացումները նրա առաջ ևս դնում են խնդիրներ՝ ի մասնավորի հնարավորինս հղկել, զարգացնել հայերենով ուսուցման լեզուն ու գտնել հանրամատչելի ներկայացնելու ուղիներ: Լեզուն ոչ միայն մտածողության միջոց է, այլ, նախ և առաջ, ազգային մտածողության ձևավորման միջոց, ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչ, ազգային, հայրենասիրական նկարագիր կերտելու գործիք, որը պետք է դրված լինի պետական չափորոշչի հիմքում և ՀՀ հանրակրթական դպրոցում ուսուցանվի այդ ելակետով ու հիմունքով:

Հայ գրականությունն առարկան իր կարևոր դերն ու առաքելությունն ունի: Գրականությունն է, որ սովորեցնում է զգալ, հուզվել, ապրումակցել, ծանոթանալ մարդկային ու ազգային արժեքներին, սովորել դարերից եկած փորձը: Գրականությունն է բարոյականության ամենամեծ ուսուցիչը, առանց որի պետական ու քաղաքակրթական ոչ մի զարգացում տեղի ունենալ չի կարող»,- ասաց Կամո Աթայանը:

«Դուք պատիվ ունեք և մեծ պատասխանատվություն դասավանդելու հայոց լեզու և հայ գրականություն, ինչը չափազանց ազգանվեր աշխատանք է և հայ ինքնությունը պայմանավորող գլխավոր գործոն: Որպեսզի կարողանաք բարձր որակով մատուցել թե՛ հայոց լեզուն, թե՛ հայ գրականությունը երիտասարդ սերնդին, աշակերտությանը և ոչ միայն, պիտի տիրապետեք գիտության վերջին նվաճումներին, և այս առումով կապը ակադեմիայի հետ չափազանց կարևոր է: Խոսքը միայն հանրամատչելիացման հարցին չի վերաբերում: Դուք պիտի իմանաք, թե ինչ է կատարվում բանասիրության ոլորտում, ինչ նվաճումներ կան, ինչ հիմնախնդիրներ, որոնք պիտի դեռևս լուծվեն»,- գիտաժողովի մասնակիցներին ուղղված իր ողջույնի խոսքում ասաց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը և ներկայացրեց Ակադեմիայի գրականության և լեզվի ինստիտուտներում իրականացվող աշխատանքները:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի որակի ապահովման բաժնի պետ, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի պատասխանատու քարտուղար Նարինե Վարդանյանը: «Արդեն 2-րդ տարին է, որ մեր կենտրոնը գիտության հանրայնացման այս նախաձեռնության համակազմակերպիչն է: Մենք մեծապես կարևորում ենք գիտության հանրայնացման դերը մեր հասարակության մեջ: Շատ կուզենանք, որ դպրոցներում «Գիտության աշխարհում» հանդեսը կարողանա տարածում գտնել նաև ձեր միջոցով, և ինչու չէ, նաև մեծ ակնկալիք ունենք ձեզ տեսնելու «Գիտության աշխարհում» հանդեսի ապագա հեղինակների կազմում»,- ասաց Նարինե Վարդանյանը:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեց 16 զեկուցում: Քննարկվեցին գրականագիտության, լեզվաբանության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները, հայագիտական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության ապահովման ուղիները, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական համակարգում, գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականության դերն արդիականացվող կրթական համակարգում, օլիմպիադաների անցկացումը: Որոշվեց ձևավորել առաջարկություններ փաթեթ գրականագիտության, լեզվաբանության հանրամատչելիացման և հանրայնացման վերաբերյալ:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման ծրագրերի վարչության, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի, ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի և Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների կողմից:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում ուսանողները և ավագ դպրոցների աշակերտները ծանոթացան տիեզերական գիտությանը, AMADEE-24 Մարսի անալոգային գիտական հետազոտության արդյունքներին

Ս/թ. մայիսի 16-ին ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Երկրից դեպի Մարս. գիտնականների ներդրումը» գիտահանրամատչելի սեմինարը, որին մասնակցեցին ավագ դպրոցների աշակերտներ և ուսանողներ: Սեմինարի նպատակն էր ներկայացնել տիեզերքի գիտությունը, վերջին տարիների արդյունքները, ներկայացնել Հայաստանում տիեզերական գիտության զարգացման միտումները:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը շեշտեց երիտասարդների մասնակցության և ակտիվության կարևորությունը՝ նշելով, որ գիտահանրամատչելի սեմինարների շարքի նպատակն է երիտասարդությանը ներգրավել գիտական միջավայր, իրազեկել նրանց և հետաքրքրություն առաջացնել գիտության նկատմամբ:

Հայաստանում անցկացված առաջին տիեզերական գիտափորձի՝ AMADEE-24 Մարսի անալոգային գիտական հետազոտության մասին պատմեց «Հայկական տիեզերական ֆորում» հիմնադրամի ղեկավար, AMADEE-24 առաքելության համաղեկավար Հայկ Ասլանյանը: Նա ներկայացրեց այս խոշոր ծրագրի նախապատրաստական աշխատանքների ընթացքը, առաքելության նպատակները, գրանցված հաջողությունները, տիեզերագնացների ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, Հայ-Ռուսական համալսարանի կենսաբժշկության և դեղագործության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանն անդրադարձավ տիեզերագնացների սննդային առանձնահատկություններին: Նա ներկայացրեց AMADEE-24 առաքելության շրջանակում հայ գիտնականների կողմից իրականացված հետազոտության արդյունքները: Արսեն Առաքելյանը նշեց, որ հարկավոր են իմունային համակարգը կարգավորող միջամտություններ՝ իմունային համակարգի ակտիվությունը պահպանելու և հնարավոր առողջական ռիսկերը նվազեցնելու համար:

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը ներկայացրեց աստղագիտության հիմնական դրույթները, խոսեց տիեզերական թռիչքների նվաճումների մասին:

«Երկրից դեպի Մարս. գիտնականների ներդրումը» սեմինարն անցկացվեց «Գիտությունն այսօր» շարքի շրջանակում, որը նախաձեռնել են ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը և ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչությունը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Երիտասարդ գիտնականի ամբիոն

Մուշեղ ՂԱՀՐԻՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի խմբի ղեկավար, պատմական գիտությունների թեկնածու Մուշեղ Ղահրիյանը ճանաչվել է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» երկու մրցույթի շահառու:

Մուշեղ Ղահրիյանն արաբագետ է, 20 գիտական հոդվածի հեղինակ, որոնցից 3-ը հրապարակվել են «Scopus» գիտատեղեկատվական շտեմարանի ամսագրերում:

Երիտասարդ գիտնականների աջակցմանն ուղղված ծրագրերը, ըստ նրա, կարևոր խթան են թիմային աշխատանքի խրախուսման և օտարերկրյա գիտնականների հետ համագործակցության համար:

Որպես «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթ»-ի շահառու՝ Մուշեղ Ղահրիյանը պարզելու է Հայաստանի վերաբերյալ ընկալումներն արաբական աշխարհում՝ արաբական մեդիայի ուսումնասիրության միջոցով:

«Մեդիան ոչ միայն տեղեկության փոխանցման ու տարածման կարևորագույն գործիք է, այլ նաև հանրային կարծիքի, ընկալումների ձևավորման: Կարևոր ենք համարում հասկանալ և ներկայացնել, թե Հայաստանն ու հայերը սովորաբար ինչ համատեքստում են հայտնվում արաբական մեդիայի լրահոսում, որ թեմաներն են առավել հետաքրքիր նրանց համար, ինչ լույսով են ներկայացնում: Հետազոտությունը թույլ կտա պարզել, թե Հայաստանի վերաբերյալ ինչ ընկալումներ են փոխանցվում, ինչ կարծրատիպեր ու կերպարներ են ձևավորվում, որքանով է լուսաբանումն անկողմնակալ»,- ասում է Մուշեղ Ղահրիյանը:

Ուսումնասիրությանը մասնակցելու են նաև ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ռուզաննա Գասպարյանը և ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ Տարոն Առաքելյանը: Իսկ թեմայի արտասահմանյան խորհրդատուն Քեմբրիջի համալսարանի ասիական և մերձավորարևելյան ուսումնասիրությունների ֆակուլտետի դասախոս էլիզաբեթ Մոնիերն է, ով մասնագիտացած է Մերձավոր Արևելքի ժամանակակից պատմության և քաղաքականության ուսումնասիրության մեջ:

Մուշեղ Ղահրիյանը ճանաչվել է նաև ԵԳԱԾ-ի «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականներին խրախուսման մրցույթի» շահառու՝ «The independence referendum in Iraqi Kurdistan: the position of Egypt and the coverage in Egyptian online media» հոդվածով: Այն հրապարակվել է «British Journal of Middle Eastern Studies»-ում, որը հրատարակվում է բրիտանական խոշոր «Routledge» հրատարակչության կողմից:

Հոդվածը նվիրված է 2017 թվականին Իրաքյան Քուրդիստանում տեղի ունեցած անկախության հանրաքվեի վերաբերյալ Եգիպտոսի պաշտոնական դիրքորոշման և եգիպտական մեդիայի արձագանքների ուսումնասիրությանը: Մուշեղ Ղահրիյանը կարևորում է արաբական երկրների ուսումնասիրությունը Հայաստանի և հայ ժողովրդի հետ ունեցած հարաբերությունների տեսանկյունից. «Կան հայ-արաբական բազմադարյան առնչություններ, հարուստ նյութ, որն ուսումնասիրվել է և շարունակվում է ուսումնասիրվել: Արաբական երկրները Հայաստանին աշխարհագրորեն մոտ են, և այդ հանգամանքը ևս կարևորում է դրանց ուսումնասիրությունը»,- նշում է Մ. Ղահրիյանը:

Մոնիկա ԵՐԻՑՅԱՆ

Հովհաննես Թումանյան. «Ահա թե ինչու»

Խմբագրության կողմից.

Ամենայն Հայոց բանաստեղծը տարբեր առիթներով մամուլում բազմաթիվ հրապարակումներ է ունեցել Հայկական հարցի, թուրքական վայրագությունների, հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանի դերակատարման մասին: Իր քննադատներին ի պատասխան՝ Հ. Թումանյանը 1912 թ. հոկտեմբերին «Հորիզոն» թերթում հրապարակում է «Ահա թե ինչու» հոդվածը, որտեղ իր հստակ դիրքորոշումն է հայտնում վերոնշյալ հարցերի վերաբերյալ: Հոդվածում արծարծված հարցերն այսօր էլ ունեն այժմեական հնչեղություն: Հարազատ մնալով մեծ բանաստեղծի գրելաոճին՝ ահա թե ինչու խմբագրությունը ևս նպատակահարմար համարեց ընթերցողին ներկայացնել որոշ հատվածներ այդ հրապարակումից:

«Հորիզոնի» N 196-ում տաճկահայոց նոր սարսափների առիթով ես մի հոդված էի գրել «Մեր երեկվան պատմությունն ու այսօրվան իրականությունը» վերնագրով, որի մեջ, շատ թռուցիկ հայացք ձգելով մեր կյանքի ու պատմության վրա, մեր ներկա վիճակը նկատել էի անցյալի շարունակությունը և ասել էի՝ եթե մեր բազմադարյան տառապանքի մեջ մի օգուտ ու օգնություն ենք տեսել, էդ եղել է Ռուսաստանից վերջին ժամանակներս, և հուսացել էի, թե դարձյալ նա օգնության կգա կոտորածի առաջ կարեկցություն ու պաշտպանություն աղերսող հայ ժողովրդին:

Էսպես գիտեմ ես մեր արյունոտ պատմությունից, էսպես է ասում ինձ Փոքր Ասիայի ու Կովկասի զարհուրելի տարեգրությունը, էսպես են խոսում ինձ հետ հայոց գրականությունն ու իրականությունը, էսպես են թելադրում ինձ իմ հասկացողությունն ու խիղճը:



…Վերցրեք Թյուրքիայի քարտեզն ու մտիկ արեք: Դա մի նոր պետություն է, որ դրսից եկել է ու կոպիտ ուժով նստել հին կուլտուրական ազգերի ու նրանց հայրենիքների վրա: Եվ էդ երկրներից մինը թե կա, որ նա համարում է ու դարձրել է իր հայրենիքը, ո՛չ Բալկանյան թերակղզին է, ո՛չ Աֆրիկայի հյուսիսը, այլ Անատոլիան, Փոքր Ասիան, էն երկիրը, ուր հայ ժողովուրդն էլ հնագույն ժամանակներից նստած պաշտում է իր Մեծ Հայաստանը, իր ազգային նվիրական վայրերն ու սրբությունները ու էն հողի վրա էլ հարուցանում ու զարգացնում է Հայկական հարցը… Եվ ահա էս հարցից ազատվելու հնարը էսպես է վճռել թուրքի պետական «հանճարը»՝ հայերին կոտորել կամ հալածել, քշել, գաղթեցնել: Այո՛, վայրագ ու անօրեն է էս ճանապարհը, այլև խելագար, սակայն հաստատ:

…էն սև օրվանից, ինչ հայտնվեց էդ ժողովուրդը, հայտնվեց ինչպես մարդկության թշնամի: Որ կողմը հայտնվեց, իր հետևից թողեց արյան լայն հետք, և ուր մտավ նրա իշխանությունը, ամեն տեղից չքացավ քաղաքակրթությունը, անհետացավ միանգամայն: Ամեն տեղ մտցրեց կոպիտ ուժի իշխանությունը և երբեք չհասկացավ ու չունեցավ օրենքի վրա հիմնված կառավարություն:

…Մենք Ռուսաստանում գտնվում ենք աշխարհիս լավ ժողովուրդներից մեկի և լավ գրականություններից մեկի ազդեցության տակ, Տաճկահայաստանն էլ կազմում է Ռուսաստանի արևելյան ազդեցության մերձավոր շրջաններից մինը և գրեթե միմիայն Ռուսաստանի: Էնտեղ էլ անցյալում նա է կամեցել և այժմ էլ նա կկամենա ու կկարողանա վերջ դնել էս ծանր դրությանը:

Հարկավ, մարդիկ կլինեն, որ կառարկեն, թե էդ ամենը Ռուսաստանը արել է, կանի, որովհետև էդպես են պահանջում իր շահերը: Ես դրան կպատասխանեմ… -Ավելի լավ, որ հզոր Ռուսաստանի ու հայ ժողովրդի շահերը բռնում են իրար: Հենց դրա մեջն է կայանում հայ ժողովրդի օգնությունը, և դրանով է նա հաստատ:

Ահա թե ինչու և ինչպես իմ հույսերն ու համակրանքը կապվում են Ռուսաստանի հետ»:

(Հ. Թումանյան, ԵԼժ, հ. 6)



Պատմական Հայաստանի Գողթն (Գողթան) գավառը (տարածքով համապատասխանում է այժմյան Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի, մասամբ նաև՝ Ջուլֆայի շրջաններին) հայկական մշակույթի, գրականության և ավանդությունների օրրան է եղել: Գողթնը գտնվում է Նախիջևանի հարավարևելյան մասում՝ Արաքս գետի ձախ ափին: Ըստ «Աշխարհացույց»-ի՝ այն Վասպուրական նահանգի 33-րդ գավառն է, իսկ 5-րդ դարի մատենագիր Կորյունի տեղեկությունների համաձայն՝ Մեսրոպ Մաշտոցը որոշ ժամանակ բնակվել է այս գավառում:

Ինչպես նշում է հայ նշանավոր ազգագրագետ, բանահավաք և հնագետ Երվանդ Լալայանը, Գողթն գավառը, իրավամբ, «նախահավատ» է կոչվում, որովհետև Սյունիքն ու այս գավառն են առաջինն ընդունել քրիստոնեությունը: Այստեղ են քարոզել սուրբ Բարդուղիմեոս առաքյալն ու սուրբ Թովման: «Ատրպատականից գալով սուրբ Բարդուղիմեոսը մտել է Գողթն, ուր շինել է մի եկեղեցի, որ կոչվել է Տեառն ընդ առաջ...*»:*

Գողթնից էր հայ եկեղեցու սրբերից Վահան Գողթնեցին (700-737 թթ)՝ տեղի Խոսրով իշխանի որդին: Գավառի Վանանդ գյուղի Նուրիջանյանների տոհմից են Թովմաս և Ղուկաս Վանանդեցիները, որոնք իրենց գործունեությամբ մնայուն հետք են թողել հայ տպագրության պատմության մեջ: Ամստերդամում նրանք հիմնել են տպարան, որտեղ տպագրել են մի շարք երկասիրություններ՝ «Համառոտ քերականութիւն», «Շարակնոց», «Սաղմոսարան», «Պարզատումար» և այլն:

Մանուկ Աբեղյանը Գողթն գավառի հետ է կապում վիպասանական երգերը, որոնք «ոչ միայն պատմվել, այլև մասամբ երգվել են»: «Յայտնեն զայս ճշմարտապէս եւ թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւետ գաւառին Գողթան»,- գրում է Մովսես Խորենացին: Այս գինեվետ գավառի գուսաններն իրենց երգերով, պարերով, զրույցներով ներկայացրել ու փոխանցել են հայոց հնագույն դիցաբանական-առասպելաբանական, նաև թատերականացված պատմությունները:

Գողթնից էին սերում հայ երաժշտության երկու հանճարների՝ Կոմիտասի և Արամ Խաչատրյանի նախնիները ևս:

Գողթնի հարուստ մշակութային պատմությունը համալրում է այս գավառի քաղաքներում և գյուղերում գրչագրված այն ձեռագրային հարուստ ժառանգությունը, որը հասել է մեր օրերը, և մի մասը պահվում է Երևանի հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում: Այդ ժառանգության մաս են կազմում Ավետարաններ, Ճաշոցներ, Մաշտոցներ և այլն: Հնագույն ձեռագրերից են 1336 թվականին ընդօրինակված Ավետարանը՝ Սուրբ Նշան անապատի գրչատանը (Մատենադարան, ձեռագիր համար 6257), 1385 թվականին գրված Ժողովածուն (Մատենադարան, ձեռագիր համար 592), որտեղ հավաքված են Ժամագիրք, Խորհրդատետր, աղոթքներ, գրիչ՝ Ղազար քահանա:

16-18-րդ դարերի ընթացքում Գողթնում ստեղծված հայերեն ձեռագրերից կարելի է հիշատակել Բիստի անապատում գրված Ավետարանը (Մատենադարան, ձեռագիր համար 592), 1637-1638 թվականներին Փառակա գյուղում Մարտիրոս քահանայի ընդօրինակած Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը (Մատենադարան, ձեռագիր համար 8205), 1634 թվականին Գողթնի Ցղնա գյուղում Մարութ քահանայի գրչագրած «Մաշտոց»-ը, որը կազմել է Դավիթ դպիրը՝ Թանկիի համար (Մատենադարան, ձեռագիր համար 4175): Գեղեցիկ մանրանկարներով, կիսախորաններով, լուսանցազարդերով է տարբերվում 1708 թվականին Գողթնում ընդօրինակված Ավետարանը (Մատենադարան, ձեռագիր համար 2590) և այլն:

Այս ձեռագրերը խոսող վկաներն են Գողթնի հայ մտավորական մտքի, գրչագիր քահանաների, հայկական գրչակենտրոնների, բնակավայրերի և ընդհանրապես Նախիջևանի մասին, որի հայկական պատմությունն ու մշակույթը լռեց 20-րդ դարի սկզբին, երբ այն բռնակցվեց Ադրբեջանին:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ

Արհեստական բանականությունը և գիտական էթիկան

Արհեստական բանականությունը (ԱԲ) այսօր ոչ միայն գիտության գործիք է, այլև փոփոխող ուժ: Նրա կիրառումը բերում է և՛ տեխնոլոգիական թռիչքի, և՛ էթիկական նուրբ խնդիրների առաջացում: Փորձենք առանձնացնել այն հարցերը, թե ինչպիսի էթիկական սահմաններ է պետք հաշվի առնել ԱԲ-ի հետ աշխատելիս, ինչպես են արձագանքում հայ գիտնականները, և ինչ ճանապարհ է պետք ընտրել՝ գիտությունը մարդկային դարձնելու համար, ոչ թե մեխանիկացված:

ԱԲ-ը՝ որպես հեղինակ. արդարությո՞ւն, թե՞ գյուտի ճնշում

Հարցադրումը պարզ է. եթե գիտական տեքստը գրվում է ԱԲ-ի օգնությամբ, բայց վերահսկվում է մարդու կողմից, արդյոք կարելի՞ է վերջինիս միայնակ համարել հեղինակ: Ժամանակակից էթիկական մոտեցումները միանշանակ են. հեղինակ է համարվում միայն մարդը, բայց պարտադիր է նշում անել՝ որտեղ և ինչպես է օգտագործվել ԱԲ-ը: Դա գիտական ազնվության նվազագույն պահանջն է:

2023-ին «Nature» ամսագիրը սկսեց պահանջել, որ հոդվածներում բացահայտ նշվի՝ արդյո՞ք ԱԲ է կիրառվել բովանդակության մշակման համար: Այս որոշումը միաժամանակ առաջացրեց դիմադրություն և ընդունվեց որպես ժամանակի հրամայական: Թափանցիկությունը գիտության վստահելիության հենասյունն է, և այն պետք է պահպանվի ցանկացած գնով:

Երբ ԱԲ-ն գիտնականից ավելի արագ է տալիս հարցադրման պատասխանը, բայց ոչ միշտ է ունակ լինում լիովին հասկանալու այդ հարցադրման նրբերանգները

Գիտության մեջ միշտ առաջնային է եղել ոչ միայն արդյունքի, այլև ճանապարհի բացատրելիությունը: ԱԲ-ի կիրառությամբ ստեղծվող խոր ուսուցման մոդելները հաճախ այդ ճանապարհը դարձնում են անտեսանելի: Արդյունքում՝ գիտնականը կարող է ստանալ անսպասելի ու անգամ ճշգրիտ կանխատեսումներ, բայց առանց իմանալու, թե ինչպես է մոդելը դրանք ստացել:

Հայաստանյան գիտաժողովներում այս հարցն արդեն քննարկման առարկա է: ՀԱՊՀ-ում տեղի ունեցած «ԱԲ և կիրառական մաթեմատիկա» թեմայով քննարկման ընթացքում գիտնականները բարձրաձայնեցին՝ «Ինչպե՞ս կարող ենք վստահել մի մոդելի, որի տրամաբանությունը չենք հասկանում»: Սա գիտական էթիկայի բարդագույն խնդիրներից մեկն է ԱԲ դարաշրջանում:

Մանիպուլյացիայի վտանգ. երբ տվյալը դառնում է քաղաքական գործիք

ԱԲ-ը կարող է վերլուծել տասնյակ հազարավոր տվյալաշարեր մի քանի վայրկյանում: Բայց այն կարող է նաև հարմարեցնել *արդյունքները՝ կախված տրամադրված ուսուցման տվյալներից: Սխալ կամ կողմնակալ տվյալներով սնուցված մոդելները կարող են հանգեցնել գիտական սխալ եզրակացությունների: Այստեղ գիտնականի պատասխանատվությունն է՝ միշտ ստուգել աղբյուրները, կիրառել բազմամակարդակ գնահատում և բաց պահել մոդելի ուսուցման գործընթացը:*

Հայաստանի գիտական հաստատություններում՝ մասնավորապես ԳԱԱ-ի համակարգում, ԱԲ-ի կիրառումը միայն սկսում է ծավալվել: Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, ինչպես նաև Բժշկական գիտությունների ազգային ինստիտուտը, իրականացնում են նախագծեր՝ հիմնված ԱԲ-ի վրա: Իսկ վերջերս ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովում քննարկվեցին արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները: Սակայն այդ զարգացումները դեռ ուղեկցվում են մի փոքր դանդաղ ընթացող, բայց անհրաժեշտ՝ էթիկական ուղեցույցների մշակմամբ: Դրանք կօգնեն պաշտպանել գիտության վարկանիշը և կձևավորեն պատասխանատու մոտեցում դեպի տվյալ, ալգորիթմ և եզրակացություն:

Արհեստական բանականությունը գիտության համար բացում է նոր հորիզոններ, սակայն գիտական մտածողության մեջ այն երբեք չպետք է զբաղեցնի այն դիրքը, որն ունենում է մարդը: *ԱԲ-ը կարող է արագացնել վերլուծությունը, օգնել կառուցելու վարկածներ, բայց այն չի կարող ստանձնել հիմնական* իմաստային և պատասխանատու վերլուծողի *դերը: Գիտական էթիկան մեզ հուշում է՝ արդի դարում գիտությունը կարող է մնալ արժանահավատ միայն այն դեպքում, երբ տեխնոլոգիան ծառայում է ոչ թե արդյունքի արագացմանը, այլ գիտելիքի ճշմարտությանը:*

Վահան ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ժուռնալիստների միության անդամ

Գրիշա Ալեքսանի Ղարիբյան

95 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիշա Ալեքսանի Ղարիբյանը:

Գրիշա Ղարիբյանը ծնվել է 1930 թ. մայիսի 25-ին ՀԽՍՀ Սիսիանի շրջանի Բորիսովկա (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ) գյուղում: 1954 թ. ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը, 1962 թ.՝ ասպիրանտուրան: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական, 1973 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1978 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

1954 թ.-ից Գրիշա Ղարիբյանը աշխատել է ԵՊՀ-ում. 1978-1990-ական թթ. եղել է քաղաքատնտեսության ամբիոնի, 1990-2008 թթ.՝ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, 1978-1991 թթ.՝ հումանիտար ֆակուլտետների ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 1984 թ. նրա նախաձեռնությամբ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը տեղափոխվել է ԵՊՀ և հետագայում դարձել տնտեսագիտության (այժմ՝ տնտեսագիտության և կառավարման) ֆակուլտետ: 1993-2000 թթ. եղել է այդ ֆակուլտետի դեկան: 2001-2023 թթ. եղել է տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր և «ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչ»:

Պրոֆեսոր Գրիշա Ղարիբյանը հեղինակ է գիտական ավելի քան 100 աշխատության, այդ թվում՝ «Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը «Սովետական Հայաստանում» (Եր., 1972 թ.) և «Проблемы повышения уровня жизни населения в социалистическом обществе» (Ер., 1977 թ.) մենագրությունների, համահեղինակ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները անկախության տարիներին» (Եր., 2017 թ.) մենագրության, ինչպես նաև՝ «Մինչմոնոպոլիստական կապիտալիզմ» (Եր., 1971 թ.), «Մարդկային զարգացման հիմունքներ» (Եր., 2004 թ.) ուսումնական ձեռնարկների և «Տնտեսագիտություն» (Եր., 2004 թ.) բուհական դասագրքի: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 50 ատենախոսություն: 2002-2018 թթ. եղել է ԵՊՀ-ում գործող տնտեսագիտության մասնագիտական խորհրդի նախագահ:

Իր հայրենանվեր գործունեության համար անվանի գիտնական, պրոֆեսոր Գրիշա Ղարիբյանը 1999 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով, 2010 թ. արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: 2018 թ. Երևանի Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում բացվել է նրա գեղանկարների անհատական ցուցահանդեսը:

Անվանի գիտնական և տնտեսագետ Գրիշա Ղարիբյանի երկարամյա՝ շուրջ 70 տարվա, բեղուն գործունեությունը Հայաստանի մայր բուհում հատկապես անգնահատելի է Տնտեսագիտության ֆակուլտետի վերաբացման և հետագա զարգացման գործում: 90-ականներին ֆակուլտետում ծավալված փոփոխությունները նոր թափ և համակարգային ընդգրկում ստացան Գրիշա Ղարիբյանի՝ որպես դեկան պաշտոնավարման տարիներին: Նրա արհեստավարժ և անմիջական կառավարման, նաև գործադրած ջանքերի և նվիրումի շնորհիվ ֆակուլտետը համալսարանի կազմում առանձնացավ որպես փորձառու մասնագիտական կառույց՝ կրթական ոլորտում արձանագրած նշանակալի ձեռքբերումներով և գիտական բարձր մակարդակով:

Գրիշա Ղարիբյանի վաստակը մեծ է նաև երիտասարդ մասնագետների պատրաստման գործում:

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում պրոֆեսոր Գրիշա Ղարիբյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին, Հայաստանի Հանրապետության կրթական և գիտական համայնքին:

Գրիշա Ղարիբյանի մեծ ու անուրանալի վաստակն ու ներդրումը մայր բուհի գիտակրթական կյանքում՝ որպես ժառանգություն, ընդմիշտ կմնա Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության պատմության մեջ:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ

Հանդիպումներ դարիներ անց
(Վիլյամ Սարոյան և Չարլի Չապլին)

1936 թ. հոկտեմբերին Վիլյամ Սարոյանն իմանալով, որ իր լավագույն բարեկամը՝ Ռուբեն Մամուլյանը, որը գործերով դեռևս ամռանը մեկնել էր Թիֆլիս և Երևան, վերադարձել է Նյու Յորք, այցելում է նրան՝ Հայաստանի մասին տեղեկություններ իմանալու նպատակով: Ահա այստեղ էլ՝ Ռուբեն Մամուլյանի հարկաբաժնում, Սարոյանը հանդիպում է Չարլի Չապլինին: Տեսնելով նրան՝ մի պահ կարկամում է և դռների արանքում որոշ ժամանակ կանգնած մնում: Ռուբեն Մամուլյանը, տեսնելով հայրենակցի շփոթմունքը, նրան ներս է հրավիրում և ծանոթացնում Չապլինի հետ:

Նյու Յորքի այն համեստ կացարանը, որտեղ բնակվում էր Չարլի Չապլինը, գտնվում էր Սարոյանի կացարանի հարևանությամբ: Ամեն երեկո, երբ Չարլին վերադառնում էր նկարահանումներից, տունդարձի ճանապարհին գրեթե միշտ հանդիպում էր Սարոյանին:

Նա հաճախ էր Չապլինին պատմում իր երկրի, իր ժողովրդի մասին, և վերջինս ցանկություն էր հայտնել լինել այնտեղ, էլ ավելի մոտիկից ծանոթանալ հինավուրց այս երկրի և նրա մարդկանց հետ: Սարոյանը խոստացել էր նրան տանել իր երկիրը: «Կուզէր երթայինք Բիթլիս, - մի առիթով վկայել է Սարոյանը, - ես շատ եմ լսեր քեզմէ քու երկրիդ մասին, կուզեմ տեսնել ան, երբ գործերնիս թեթևնայ, անպատճառ պիտի երթանք, պիտի նկարեմ քու երկիրդ, որ միշտ քեզի հետ ըլլայ, ավաղ, չկրցանք երթալ»:

1943 թ. Սարոյանը կնոջ՝ Քերոլի ծննդյան տարեդարձի օրը Չապլինը ծանոթանում է հյուրերից մեկի՝ Ունայի հետ, որը հետագայում դարձավ նրա կինը:

1952 թ., երբ Չապլինին իր նկարահանած «Մսյո Վերդու», «Բեմի լույսերը» ֆիլմերի համար վտարում են ԱՄՆ-ից, Սարոյանը խորապես վշտանում է, անմիջապես կապվում է Չապլինի հետ, նրան առաջարկում իր օգնությունը և փորձում նրան դուրս բերել հոգեկան ծանր վիճակից:





1952-1954 թթ. Չապլինն ընտանիքով ապաստանում է Շվեյցարիայում, 1955 թ. տեղափոխվում Լոնդոն: Երկար տարիներ Սարոյանն ու Չապլինը չեն հանդիպում: Սարոյանը միշտ հետաքրքրվում էր Չապլինով: 1975 թ. մայիսի վերջին Փարիզում պատահաբար հանդիպում են Սարոյանն ու Չապլինը:

«Հանդարտ կը քալեի Սենայի ափերով, հանկարծ նկատեցի ծանոթ պրոֆիլ մը,- հավաստում է Սարոյանը,- դեպի ինձ կուգար փոքր ծերունի մը՝ ձեռնափայտը ձեռքին, որը արագ կը պտտցներ, քովեն կքալեր Ունան, որուն անմիջապես ճանչցա: Երբ անոնց դեմը ելա, անոնք պահ մը կանգ առին, չեմ կրնար բացատրել անոնց զարմանքն ու ուրախությունը: Մենք ուղևորվեցանք անոնց հյուրանոցին սենյակը և մինչև լուսաբաց խոսեցանք: Ավաղ, այլևս չտեսնվեցանք: Երկու տարի ետք մամուլեն տեղեկացա, որ Չափլին հեռացեր է այս աշխարհեն, չեք հավատար, թե որքան վշտացա, մանուկի մը պես կու լայի»:

Այն հարցին, թե որն էր նրանց երկար բարեկամության գաղտնիքը, Սարոյանը պատասխանել է. «Բարությունը և նորեն բարությունը, բարեկամեցողությունը»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ»
ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի հետևյալ բաժինների վարիչների և նորաստեղծ լաբորատորիայի վարիչի թափուր տեղերի համար

1. Երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժին,

2. Հայաստանի ֆլորայի գենետիկական ռեսուրսների պահպանության բաժին,

3. հնէաբուսաբանության բաժին,

4. բույսերի ներմուծման բաժին,

5. մոլեկուլյար հետազոտությունների լաբորատորիա:

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1. ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,

2. ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ,

3. վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) կենսաբանական գիտությունների բնագավառում «Բուսաբանություն» մասնագիտությամբ ՄԳՇ-ում համահեղինակել է առնվազն վեց հրապարակում կամ երկու մենագրություն,

4. վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) կենսաբանական գիտությունների բնագավառում «Բուսաբանություն» մասնագիտությամբ ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն երեքում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,

բ) լուսանկար,

գ) ինքնակենսագրություն,

դ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը,

զ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված աշխատանքների ցանկ,

թ) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

ժ) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Աճառյան 1, ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռախոս՝ 010-621762:

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ

Գիրություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4,
հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 26.05.2025 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: